

փոխարէն հարիւր ոսկի պարգեւեց. և խրախուսեց դարձեալ զինքը որ չլքանի, ու նորէն ուրիշ նիւթ մը առաջարկեց որ է Թեբայից կամ Թշնափ Եղբարի ըսածը: Կան դեռ ուրիշ նմանօրինակ դէպքեր, որոնք զանց կ'ընենք յիշելու, մինչդեռ ըսածնիս ըստ բաւականին յայտարար են անուանի կատակերգակիս բարուցն ու հանձարոյն:

Իր վերջի երկասիրութիւնը եղաւ երեսփայեալ հիւանդն ըսուած կատակերգութիւնը՝ որուն ձեւացուելուն ժամանակ, ուր ինքը գլխաւոր անձը կը ձեւացընէր, յանկարծ սկսաւ բերնէն յորդ արիւն վազել որուն վրայ քանի մը ժամէն մեռաւ 1673 փետրուարի 17^{ին} 51 տարուան:

Գաղղիոյ Ղեմարանը ուզելով ցուցնել իր համարմունքը զոր ունէր Սուլիերի վրայ և չէր կրցած դեռ զինքն ալ իրեն անդամակցել՝ ի պատիւ անմահ կատակերգակիս կ'ձեայ արձան մը կանգնել տուաւ Ղեմարանին սրահներէն մէկուն մէջ այս մակագրութեամբս.

Իւրոց փառաց չէր ինչ պակաս, ինքըն մերումըս պակասէր:

Յիշատակելու արժանի է դարձեալ Տ. Պուհուրի այս վերտառութիւնը՝ որ Սուլիերի վրայ գրուածներուն մէջ ամենէն արժանաւորը կրնայ սեպուիլ.

Քե հրահանգեցան քաղաք Էսթրբունիք
Այլ զինչ վաստակոց փոխարէնք առ քեզ.
Օր մի Գաղղիոյ շինեսցին որդիք
Յիւրեանց այդքանոց ապախտեացն ի տես.
Պէտք էին նոցա ի կիրթ զի նուիրէր
Կատակերգակ քերդող զիւր փառս և զհանձար:
Այլ քոց փառաց չէր ինչ պակաս. Մուրիւր,
Թէ ընդ ախտից զոյց տաս ճըշգրիտ ըզնրկար
Զապաշնորհից բարս առնուիր կը շտամբել:

Զիմպորասնոյ:

Իսկ լեռս Բնտեանց Գորտիլեաններուն մէջ ամենէն բարձրն է, և հաբաւային Բմբիկայի եզերքներուն վրայ կիյնայ, ուր ձմեռը անդադար անձրև

կու գայ. գագաթը բոլորչի է և բարձրութիւնն ալ է 22,000 ոտք: Երբ հոն օդը սկսի անգայտանալ՝ առջի բերան այս լեռը հորիզոնին վրայ ամպի պէս բան մը կ'երևայ. ետքը երբ երթալով կամաց կամաց օդը կը պարզի ու կը մաքրուի՝ այն ատեն ահա որոշ մէկալ լեռներէն կը զատուի, և իրեն բարձր գլուխը անոնց մէջէն վեր կ'ամբառնայ: Բայց սուր ու վարժ աչք պէտք է որ ասոր գեղեցկութենէն համ առնէ: Զիմպորասնոյ շրջապատը, այն տեղէն առնելով ուր որ ձիւները կը լմնան, է 22,968 ոտք: Բնտեանց Գորտիլեաններուն վրայ եղած օդին սաստիկ խտութիւնը շատ կ'օգնէ այդ յաւիտենական ձիւնին դէզերուն սպիտակութեանն ու պայծառութեւ: Երկինքը, որ արեւագարձներուն տակ, և ըստ ինքեան այնպիսի մաքուր մթնոլորտի մը մէջ պէտք էր անոյշ ու թափանցիկ կապուտակ գոյն մը ունենար, ընդհակառակն լեղակի նսեմ ու տխուր գոյն մը առած է: Բայց երևոյթս որ գրեթէ բոլոր Բնտեանց Գորտիլեաններուն սովորական է, անակ տպաւորութիւն մը կ'ընէ ճանապարհորդաց վրայ, որ կամայ ու ակամայ յարգանք և ահ մը կը բերէ, երբ առաջին անգամ տեսնէ մէկը այդ տեսարանը:

Զիմպորասնոյ լեռը քննելու համար գիտնոց մէջ ամենէն աւելի քաջասրտութիւն ու մտքի ամբողջութիւն ունեցողներուն մէջ ամենէն աւելի նշանաւորները եղան Հումպոլդ, Պոնբլան, և Սոնդաֆար: Երբ այս տառապելի ու միանգամայն վտանգաւոր ճամբորդութեան ձեռք զարկին քանի մը հնդիկներու առաջնորդութեամբ, որոնք իրենց կեանքին համար վախնալով մէկէն բաժնուեցան ասոնցմէ: Բայց իրենք փոխանակ ետ կենալու՝ հրաբխային պատառուածքի շաւիղ մը գտնալով, որոնց վրայ դեռ ձիւն չէր նստած, սկսան ճանկուտելով ելլալ ինչուան 16,000 ոտք վեր: Հումպոլդ կ'ըսէ որ եթէ դիմացին լայն պատառուածք մը ելլելով զիրենք չարգիլէր, դեռ աւելի

վերերը կ'ելլային : Բայց այդ անյաղ-
թելի արգելքը զիրենք վար իջնալ ստի-
պեց՝ որով իրենք ալ մէկէն վար իջնա-
լով, հիւանդացան մնացին . աս բանիս
պատճառը վերի օդին մէջ եղած թը-
թուածնոյն շատութեանը կու տային :
Պարձերնին ուրիշ նորահաս ձախոր-
դութիւններով ալ նշանաւոր եղաւ .
վասն զի սոսկալի յորդ ձիւն մը տեղա-
լով՝ շատ անգամ զիրար կորսնցուցին, ո-
րով ցրտէն հոգինին բերաննին եկաւ :

Ետեւոր երբ Սպանիացիք ուզեցին
Վիդոյի տիրել, Զիմպորասոյի ա-
հագին անապատներէն անցնելով՝ ի-
րենցմէ շատերը դիակնին հոն ձգեցին
ու Զարդուեցան : Բայց հիմա հոնաեղի
կլիմային վարժելով՝ ալ չեն փասուիր,
և փորձով գիտեն թէ երբ երկինքը
ամպոտ է և քամի կայ պէտք չէ ճամ-
բայ ելլալ :

Գողթախի :

Վողթախի Լադաբունկայի եզեր-
քին վրայ կ'իյնայ, հինգ փարսախ հե-
ռու նոյն նահանգէն : Երկայ Ենտեանց
Վորտիլեաններուն ամենէն աւելի վը-
տանգաւոր հրաբուխներէն մէկն է, և
որչափ յաճախ են իր բռնկելները, նոյն-
չափ ալ աղետալի են : 1533ին եղածը,
որ խիստ սաստիկ եղած է, ճիշդ այն
ժամանակը հանդիպեցաւ՝ յորում Սե-
բաստիանոս Պալաքազար կը պատրաս-
տուէր Վիդոյի Թագաւորութե վրայ
արշաւելով տիրելու : Եւս գիպուածը
իրեն շատ մեծ յաջողութեան պատճառ
եղաւ . վասն զի հնդիկ հմայները, որոնց
գուշակութեցը ամենայն կերպով հա-
ւատք կ'ընծայէին տեղացիք, առաջու-
ցունէ գուշակած ըլլալով թէ երբ այն
հրաբուխը պատռի իրենց երկիրն ալ
ուրիշ անժանօթ Թագաւորի մը տակ
պիտի իյնայ, որով այս արկածս իրենց
յաղթութեւ նշան մը սեպելով՝ անանկ
լքան լուծան՝ որ Պալաքազար առանց
գիմադրութիւն մը գտնալու, տարուան
մը մէջ անաշխատ տէր եղաւ բոլոր եր-

կրին, և Ժողովուրդը Սպանիոյ լծին
տակ ձգեց :

1743ին նորէն բռնկեցաւ Վողթախի
Եւս անգամուն քանի մը օր առաջ
իմաց տուաւ գետնին տակ ըրած ահա-
ւոր որոտումներով : Սէկ բերան մը
գագաթէն բացուեցաւ, իրեք ալ իր ձիւ-
նապատ կողերուն վրայէն . դուրս պոռթ-
կացած մոխիրը սառերուն ու ձիւներուն
հետ խառնուելով և չորս բերնէն ելած
բոցերէն հալելով՝ ահագին հեղեղ մը
ձեւացնելով, բոլոր երկիրը ողողեց :
Վալլօէն սկսեալ ինչուան Լադաբուն-
կա քիչ ատենի մէջ Զրով ծածկուելով
ընդարձակ ծով մը դարձաւ, որուն կա-
տաղի ալիքները խիստ շատ մարդու
կորստեանը պատճառ եղան, և քիչ
կտրիճներ միայն կրցան ազատիլ : Եւ-
րո խեղճ հնդիկներուն խրճիթները
կործանեցան և ալիքներն առին տարին :
Վերայ այսր ամենայնի բոլոր նահանգը
չապականեցաւ, և միայն այն տուները
կործանեցան՝ որոնք որ Զրին ճամբուն
վրայ ինկած էին : Բնակիչքը բարձր
տեղեր ապաստանելով իրենց գաշտերուն
ու տուներուն աւերմանցը ականատես
կ'ըլլային : Եւղձերը իրեք օր միակերպ
աւելի մեծագոյն թշուառութեանց վա-
խով չարաչար անձկութեան մէջ տա-
ռապեցան . վասն զի դեռ հրաբուխը ին-
չուան խիստ հեռու տեղեր իր մոխիրը
կընետէր, և բոցերն ալ դեռ նոյնպէս
ձիւնն ու սառերը հալեցընելով Զրին
զանգուածը կը ստուարացընէին . բայց
կամաց կամաց հանգարտելով մէյմ՝ ալ
յանկարծ մարեցաւ : Եւս այն դեռ օ-
րերով լերան ծայրը կրակ մը կը տես-
նուէր, և քամին հրաբխին բերնէն ներս
մտնելով ահաւոր գոռում գոչում մը կը
պատճառէր : Եւս ատենէն կրակն ալ,
ծուխն ալ, ձայնն ալ ամէն բան դադ-
րեցաւ գնաց :

Հետեւեալ տարին մայիսի մէջ նո-
րէն երեցան բոցերը . բայց աս անգա-
մուն կողերուն վրայ բռնութիւն տալով,
այլ և այլ տեղերէ ճամբաներ բացաւ,
և բոցը անոնց մէջէն կ'երևնար . անանկ
որ ան գիշերներն որ մշուշ չէր ընէր՝ բո-